Սարդարապատում, Ալեքսանդրապոլում կուտակուում էին հազարաւոր սակեարներ, որոնք թալանում էին ժողովրդին, մանում շրջակայ գիւղերը, խլում ինչ որ պատահի, կոտրում-փչացնում կայարաններն ու երկաթուղային կազմուածքը: Մորեխի պէս, այս ամբոխը սրբում-ոչնչացնում էր ճանապարհին ամէն բան:

Դժուար է տալ իրական պատկերը Թիւրքերի գործած աւերի ու քայքայման իրենց ութնամսեայ տիրապետութեան շրջանում և հեռանալու ժամանակ: Մեր ձեռքի տակ կայ «Համաշխարհային Պատերազմից Հայ Ժողովրդի Կրած Վնասների Քննիչ Յանձնաժողովի» մէկ պաշտօնական զեկուցումը Փամբակ-Լոռի շրջանում Թիւրքերի հասցրած վնասների մասին: Այդ զեկուցումը կազմուած է 1918թ. դեկտեմբերի առաջին կիսին, Թիւրքերի հեռանալուց անմիջապէս յետոյ, տեղն ու տեղը, բոլոր գիւղերում կատարուած քննութեան ու հաւաքած նիւթերի հիման վրա: Ահա մի քանի քաղուածքներ այդ զեկուցումից, որոնք տալիս են աղօտ պատկերը սոսկ իրականութեան, որը անհամեմատ աւելի մռայլ էր:

«Թիւրք զօրքը ներս է խուժել Փամբակի շրջանը 1918թ. մայիս 20-ին: Այդ զօրքը Ջաւիդ բէյի 11րդ դիվիզիան էր, որի շարքերում մեծ թիւ էին կազմում քիւրդ զինուորները»: Ղարաքիլիսա հասնելուն պէս, նրանք սկսում են կոտորել հայերին. «կոտորածները բնաւ անկարգ, պատահական բնոյթ չեն կրել, այլ եղել են ծրագրուած ու կազմակերպուած և տեւել են պաշտօնապէս երեք օր»:

«Ղարաքիլիսայում թէ բռնութեամբ և թէ զանազան խորամանկ միջոցներով հաբիւրաւոր մարդկանցից բաղկացած խմբեր են հաւաքել և գիւղից դուրս հանելով՝ զնդակահարել կամ սուինահարել են: Ղարաքիլիսայում սպանել են բոլոր հայ սպաներն ու զինուորները, որոնք պարտութիւնից յետոյ կամ գերի են ընկել, կամ կամովին ապաւինել յաղթողների մեծահոգութեան: Նոյն տեղում կոտրուած են, բացի տեղացիներից, բազմաթիւ գաղթականներ Կարսի և Ալեքսանդրապոլի շրջաններից: Ընդհանուր առմամբ, Ղարաքիլիսայի շրջակայքում զնդակահարուած են մի քանի հազար մարդ — ճիշտ թիւը պարզելու հնարաւորութիւն չկայ: Պէտք է կարծել, որ այդ թիւը 3000-ից պակաս չէ, թէև ոմանք հասցնում են մինչև 7000-ի: Այս թւի մէջ չեն մտնում սպանուած տեղացիները՝ 1470 հոգի: Այս ձևի կոտորածներ տեղի են ունեցել նաև Համամլուում, Հաջիղարայում, Դարբազում, Ղշլաղում և Եղաբլուում: Միւս գիւղերում սպանութիւնները զանգուածային բնոյթ չեն կրել, սակայն, մարդկային զոհերը պակաս չեն եղել և այս գիւղերում. այստեղ Թիւրքերը իրենց ծրագիրը իրագործել են մեղմ ձևով: Աբեմտեան Փամբակի գիւղերից գերի են առել հարիւրաւոր երիտասարդներ, որոնք գրեթէ բոլորը ոչնչացել են քաղցից, ծեծից և ուժից վեր աշխատանքներից՝ Էրզրումի շրջանում: Սակաւաթիւ վերադարձողները պատմում են, որ նրանց, բացի այլ և այլ տաժանելի աշխատանքներից, լծում էին սայլերին և քշում երկաթէ ճիպոտներով: Էրզրում քշուած 8000 գերիներից — Շիրակից ու Փամբակից — վերադարձել են միայն մօտ 600 հոգի»:

«Թէ մեր շրջանում և թէ ամենուրեք առանձնապէս հետամտել են Թիւրքահայերին և ճանկը ընկածներից ոչ մէկը չի խուսափել մահից:

«Բռնաբարութիւնները կրել են բուռի ամենալայն իմաստով զանգուածային բնոյթ. կան գիւղեր, որոնք, հէնց իրենց գիւղացիների խոստովանութեամբ, ենթարկուել են լիակատար բռնաբարութեան (Նալբանդ գիւղը):